

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆՈՒՀԻՆԵՐԻՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱՅԻՆԵՐԻՆ ԼԵՀՈՒՀՈՒ ՄԱՍԻՆ

(Էլիզա Օժէշկօի)

«2ր կան իրաւունքներ առանց պարտականու-
թիւնների. պարտականութեան լրջութիւնը աւելա-
նում է իրաւունքի արժէքի հետ, իսկ իրաւունքը
պատկանում է միմիայն նրան, ով ուզում է և կարող է
կատարել համապատասխան պարտականութիւններ»:

Յ ա ո ա ջ ա ր ա ն

Ժամանակակից հաղորդակցութեան ճանապարհների և
շատ ուրիշ գործօնների շնորհիւ՝ առանձին ազգերի մէջ տեղի
ունեցող մտքերի փոխանակութիւնը այժմ աւելի եռանդով է
կատարւում, քան առաջ, և այդ պատճառով մարդկային մտքի
արտադրութիւնները այժմ թարգմանւում են մի լեզուից միւսը
աւելի մեծ թւով, քան երբեք: Երբէք զանազան ազգերի
ստեղծագործող հոգիները այսքան յաճախ չեն հանդիպել դէմ
առ դէմ և, դնելով միմեանց փոխադարձ զարգացումը, փոխ-
տուել ու փոխ առել համանման, բայց և ինքնուրոյն լոյսի ճա-
ռագայթներ: Սկանդինաւիան յանկարծ երևան եկաւ ամենքի
համար անակնկալ փայլով. հեռաւոր արևելքից հնչեց Եւրո-
պայի բոլոր կողմերը ուռա զրող ու մտածող Տոլստօյի հզօր
ձայնը: Մեր (լեհացիների) գրականութիւնն էլ իւրացրին այն-
պիսի ազգեր, որոնք չեն հասկանում մեր լեզուն և նոյնիսկ
կարող էին կարծել, թէ լեհերէնը արդէն չքացել է աշխարհի
երեկոց, եթէ նրանց առաջ երևան չը գային մեր լեզուով, այց

նրանց համար մատչելի ձևով ստեղծուած մտքեր ու խոհեր, որոնք կարծէք ասելիս լինէին նրանց.

«Մեր հայրենի երկիրը լուսաւորում է նոյն արեւը, որ փայլում է և ձեր երկնակամարում. մեր հողը սնւում է միևնոյն կենսարար հիւթերով. նա ծնում է նոյնպիսի հոգիներ, որոնք ձգտում են դէպի մարդկային գոյութեան բարձունքները և որոշում են նրա անդունդները: Դիտեցէք նրանց, և նրանց միջով դուք կը տեսնէք այն հողը, որ ծնել է նրանց»:

Ազգերի այդ զրոյցի մէջ, որ թերեւս պատրաստում է նւրանց համար այժմեան շրջանից աւելի լաւ ու աւելի ներդաշնակ ապագայ, լւում է նաև մեր ձայնը,—մի բան, որ ևս աւելի գոհութիւն պէտք է պատճառի մեզ, որովհետև մեզ համար շատ դժուար էր համապատասխան տեղ գրաւել ուրիշ ազգերի թւում: Երբ մենք կանգնում ենք այն դռան առաջ, որի յետևում տեղի է ունենում ընդհանուր զրոյցը, մոռնալով չի յայտարարում գոռ ձայնով՝ մի հզօր հիւրի գալուստ: Սակայն դուռը բացւում է, և մենք ներս ենք մտնում:

Նոր բան ասած չեմ լինի, եթէ յիշեցնեմ, որ դռները բացուեցին, գլխաւորապէս, շնորհիւ Հենրիկ Սենկկիչի, որ հասցըրեց լեհական վիպագրութիւնը այնպիսի գեղարուեստական բարձրութեան, որին երբէք չէր հասել մեր՝ վիպագրութիւնը և որ ուրիշ ազգերի մէջ էլ յաճախ չէ պատահում:

Նրա և նրան ծնող երկրի անունը հռչակուեց ամբողջ եւրոպայում, որ հաղորդեց այդ անունները նաև ովկիանի միւս ափը: Բայց միայն արեւ չէ, որ փայլում է երկնքում,—կան նաև աստղեր. երկրիս երեսին հնչում է ոչ միայն սոխակի երգը, այլև արտոյտի ձայնը. դաշտերը արտաղբում են տարբեր մեծութեամբ և պէսպէս գոյներով բոյսեր, և, ինչպէս յայտնի է, երևոյթների այդ բազմազանութեամբ է արտայայտւում երկրի հարստութիւնն ու պտղաբերութիւնը: Այդ երևոյթներից իւրաքանչիւրը կատարում է իրան յատուկ պաշտօնը, նրանցից ամեն մէկը աւելի կամ պակաս մեծութեան մարգարիտ է ընդհանուր գանձարանի մէջ, տարբեր արժէքի հատիկ՝ ընդհանուր շտեմարանում, տարբեր աստիճանի օժանդակ, բայց և միշտ անհրաժեշտ ոյժ է, որ իր առանձին նշանակութիւնն ունի մարդկութեան յառաջագիմական շարժման մէջ:

Վերջերս, մօտ 15 տարի սրանից առաջ *), սկսեցին իմ գրուածքները թարգմանել օտար լեզուներով, իմիջի այլոց նաև

*) Այս յօդուածը գրուած է անցեալ դարի վերջում:

գերմաներէն: Գերմանուհիներին առանձնապէս դուր եկաւ իմ «Մարթա» վէպը, որ հրատարակուեց «Ein Frauenschicksal» վերնագրով: Գերմանիայում գոյութիւն ունեն բազմաթիւ կանացի ընկերութիւններ, որոնց նպատակն է աջակցել կանանց մտաւոր և տնտեսական յառաջադիմութեան գործին: Այդ ընկերութիւններից մի քանիսը որոշել էին, իմիջի այլոց, կազմակերպել զանազան քաղաքներում ու ժողովներում այդ վէպի հրապարակական ընթերցանութիւններ: Այդ վէպը լոյս տեսաւ բազմաթիւ հրատարակութիւններով, որ՝ միացած իմ նոյնպէս բաւական յայտնի դարձած մի ուրիշ վէպի—«Մէյէր Եոզէֆովիչի»—ունեցած յաջողութեան հետ, յառաջ բերեց բազմաթիւ թարգմանութիւններ իմ ուրիշ երկերից: Գերմանացիներից ու գերմանուհիներից ես յաճախ ստանում էի նամակներ, որոնք, ինչպէս առհասարակ լինում է այդպիսի դէպքերում, լիքն էին լինում համակրութեան արտայայտութիւններով ու գովասանքներով: Վերջապէս, իմ գրական գործունէութեան քսանհինգամեակին՝ ես ստացայ մի քանի գերմանական ընկերութիւններից (Allgemeiner Frauenverein, Deutscher Frauenverein, Deutscher Frauen Reformverein, Frauenwohlverein և այլն) բազմաստորագիր ուղերձներ և, բացի այդ, բազմաթիւ մասնաւոր նամակներ, իմիջի այլոց նաև յայտնի բարեգործուհի և գրող տիկին Աննա Մորգենշտերնից (Բերլին):

Ինչպէս պէտք է պատասխանէի այդ նամակներին ու շնորհաւորութիւններին և շնորհակալութիւն յայտնէի այդ աստիճան շոյիշ ուղարկութեան համար: Շատ դժուար էր պատասխանել ամեն մէկին առանձին: Այն ժամանակ ես վճռեցի ընդհանուր կերպով շնորհակալութիւն յայտնել, և միանգամայն, դէպքից օգուտ քաղելով, հաղորդել օտարագրի կանանց լեհուհիներից մէկի խոհերը կանանց հարցի մասին: Այն բաց նամակը, որ այդ նպատակով գրեցի և որ հիանալի կերպով գերմաներէնից թարգմ. տ. Մալվինա Բլումբերգը, տպուեց տիկին Մորգենշտերնի խմբագրութեամբ Բերլինում հրատարակուող թերթում *), իսկ այնուհետև լոյս տեսաւ նաև առանձին հրատարակութեամբ: Այսպէս է լոյս աշխարհ եկել գերմանուհիներին գրուած նամակ, որ միաժամանակ լեհերէն լեզուով տրպեցին «Ster»-ը Լեմբերգում և «Bluszcz»-ը Վարշավայում:

Միւս յօլուածս—«Լեհուհու մասին»—գրեցի «Revue des Revues» ամսագրի խմբագիր պ. Ժան Ֆինսօի հրաւերով, որ մի

*) Hausfrauen-Zeitung-ում:

լախ ծրագիր էր յղացել, այն է՝ հրատարակել մի շարք ուսումնասիրութիւններ բոլոր երկիրների կանանց բնաւորութեան, վիճակի և ձգտումների մասին: Չը գիտեմ, ինչ պատճառներով միմիայն մասամբ իրագործուեց այդ լախ մտածուած ծրագիրը: Հրաւերին արձագանգ տուեցին միայն մի ֆրանսուհի, մի գերմանուհի, մի իսպանուհի, մի ռուս կին և մի լեհուհի: Այդ շատ տարածուած ֆրանսիական ամսագիրը մինչև այժմ գետեղել է ընդամենը հինգ ուսումնասիրութիւն այդ հարցի մասին:

Էլ ի՞նչ ստեմ այն գրքոյկի մասին, որ այժմ տալիս եմ հայրենակցունիւներիս ձեռքը: Ինչ մնում է հաղորդել նրանց նաև մի փոքրիկ գրութիւն, որ դարձեալ ուղարկել եմ արտասահման: Ժընևի «Revue des sciences morales» նոր ամսագրի խմբագրութիւնը դիմել էր իր ազագայ աշխատակիցներին հետեւեալ հարցմունքով, որ կապ ունի կանանց խնդրի հետ.

„Quelle mission morale attribuez vous au mouvement féministe dans l'évolution de la société contemporaine“ *).

Ես պատասխանեցի հետեւեալը.

«Խեղքը միայն այն ժամանակ է կեանքի տաճարները լուսաւորող բարերար ջան հանգիստանում, երբ սեղաններ են կանգնեցրած այդ տաճարներում: Առանց ջանի՝ մարդիկ կարող են կուռքերը աստուած համարել և աստուածներին՝ կուռք: Իսկ եթէ սեղաններ չը լինեն, մարդիկ կարող են ամենայն յարմարութեամբ զբօսնել լաւ լուսաւորուած տաճարներում, բայց ոչ ոք չի աղօթիլ այնտեղ:

«Շատ սեղաններ, որոց առջև մարդկութիւնը աղօթում էր, կործանուել են, և մարդկանց հոգիներում դատարկութիւն է մնացել, և տիրել է այնտեղ դառնութիւն, ձանձրոյթ և յանցանք:

«Բանականութեան ջանք աղօտ լոյսով էր վառուած կանանց ձեռքում, որովհետև գիտութիւնը չէր բորբոքում նրա բոցը: Այժմ կանայք, օրէցօր աւելի ու աւելի ազատ մուտք ստանալով գէպի գիտութեան կրակարանը, կարող են հետզհետէ աւելի ու աւելի յաջողութեամբ աջակցել մարդկային ցեղի արական կէսին նոր աղօթարաններ կառուցանելու գործում, այսինքն այնպիսի զգացմունքներ ու ձգտումներ զարթեցնելու մէջ, առանց որոնց գոյութեան՝ կեանքը դառնում է մի թեթեամիտ զբօսանք կամ յանցագործութիւնների մի շարք:

*) «Ի՞նչ բարոյական դեր էր վերագրում կանանց շարժմանը ժամանակակից հասարակութեան յառաջադիմութեան գործում»:

«Ես չեմ ընդունում ոչ մի սեպարատիզմ մարդկային ցեղի երկու կէսերի մէջ, ոչ մի առաւելութիւն այլ մարդկանցից, ոչ մի յիշաչարութիւն մեզ հասցրած զրկանքների նկատմամբ: Վերջերքս մեր ձեռքը ընկած ջահը չը պէտք է գործ դնենք այնպիսի նոր աղբիւրներ փնդոելու համար, որոնք կարող են բաւարարութիւն տալ մարդու միմիայն անասնական հակումներին: Պէտք է որոնել միմիայն այնպիսի աղբիւրներ, որոնք կարող են կազդուրել և ջերմացնել մարդու հոգին:

«Եթէ այդ չէ լինելու գիտութեան տաճարը մուտք գտած կանանց ձգտումը, աւելի լաւ կը լինի, եթէ նրանք իսկոյն և եթ հանգցնեն իրանց ձեռքի ջահը: Այդ ջահը պէտք է աշխարհին, որ առանց այն էլ բաւական լոյս ունի՝ ուղղուած մանր, կեղտոտ, եսական ու անսիրտ գործերի ու ջանքերի կողմը»:

Գիտեմ, որ այնպիսի մի հայեացք, որ հիմնւում է կնոջ բարոյական կատարելագործութեան վրայ և նրա մտաւոր կըրթութեան գլխաւոր նպատակը համարում է մարդկային ցեղի բարոյական յառաջադիմութեան աջակցելը, շատերին դժգոհութիւն կը պատճառի և նոյնիսկ առիթ կը տայ կասկածելու, թէ ես պատկանում եմ յետամնացների թւին: Բայց այդ իրաւացի չէր լինի: Ոչ ոք չի կարող հերքել այն ճշմարտութիւնը, որ այժմեան քաղաքականութիւնը հաւասարակշիռ գրութեան մէջ չէ, որ նա շատ է թեքուել կեանքի նիւթական խնդիրների կողմը և որ այդ է շատ աղետների, թշուառութիւնների և անարդարութիւնների աղբիւրը: Խելքը և գիտութիւնը ծառայում են աւելի, այսպէս ասած, նիւթական քան բարոյական գիւտերի գործին: Այդ չը պէտք է մեր աչքում նուաստացնի խելքի և գիտութեան հեղինակութիւնը, այլ մենք պէտք է ուշադրութիւն դարձնենք մեր սեփական ոչնչութեան վրայ:

Մենք ինքներս ենք մանր, և ամեն ինչ, որ ինքն ըստ ինքեան մեծ է, մանրացնում ենք ու հաւասարեցնում մեր չնչին չափին:

Ինչպէս հաւատը, հայրենասիրութիւնը և մարդկային ոգու ուրիշ գերագոյն արտայայտութիւնները, այնպէս և բանականութիւնը ու գիտութիւնը, մարդկային գործունէութեան անկատարութեան շնորհիւ, սկսել են յիշեցնել երկերեսանի Հանուսի *) պատկերը՝ դաժան և միանգամայն հեզ, չար և բարի:

*) (Հովակիմյեցիների) արևի աստուած, որ առաւօտեան բանում էր երկնքի գուները, իսկ երեկոյեան փակում, Ուստի և արձանը շինւում էր երկու երեսով: Ծ. Թ.

Բանականութեան և գիտութեան սնանկութիւնը չէ այդ, ինչպէս պնդում են ոմանք, այլ մի նոր ապացոյց այն հին ճշմարտութեան, թէ միմիայն առողջ ծառի վրայ կարող են բուսնել լաւ պտուղներ և թէ ամենահիանալի պատուաստն անգամ չի կարող ցանկալի պտուղներ բուսցնել վատառողջ ծառի վրայ: Մենք բարոյապէս հիւանդ մարդիկ ենք, և դրանից է յառաջ գալիս գիտութեան և բանականութեան արդիւնքների մեզ զարմանք պատճառող և մեզ համար կորստաբեր երկուութիւնը: Այդպիսի եզրակացութիւն միայն այժմ կարելի է անել. այդ ճշմարտութիւնը չէին կարող հասկանալ մարդիկ մեզնից նոցիսկ մի քանի տասնամեակ առաջ, երբ մարդկութեան դրօշակի վերայ փողփողում էր՝ «Գիտութիւնը ոյժ է» մակազբուրթիւնը: Գիտութիւնը մեծ ոյժ է, անկասկած, բայց փորձը ցոյց տուեց, որ այդ միմիայն մէկն է այն բազմաթիւ ոյժերից, որոնք պէտք է ենթարկուած լինեն բարւոյ սկզբունքին: Բարին—անա միակ հիմքը, որի վրայ կարող են երկարատե շէնքեր կառուցանել միւս ոյժերը, անա միակ առաջնորդը, առանց որի հրամանատարութեան կատարեալ պարտութեամբ է վերջանում միւս ոյժերի պայքարը:

Ինձ թւում է, թէ համապատասխան համոզմունքների ու ձգտումների տէր կանայք կարող կը լինէին մեծ չափով նպաստել այն բանին, որ բարոյական բարիքի կողմը ուղղուէր մեր քաղաքակրթութիւնը, որ չափազանց շատ է թեքուել դէպի նիւթական բարիքների կողմը. ինձ թւում է, թէ այդ պէտք է լինի նրանց գլխաւոր գործը, և որ եթէ նրանք սկսէին իրագործել այդ ծրագիրը, չափազանց մեծ, կարելի է ասել, անգնահատելի կարևորութիւն կ'ունենար նրանց ծառայութիւնը ամբողջ աշխարհի առաջ:

Գիտեմ, որ ասածներս շատ էլ գրաւիչ չեն, որովհետեւ պահանջս շատ խիստ է: Բայց ի՞նչ արած: «Ernst ist das Leben» *), ասել է մի գերմանացի փիլիսոփա, իսկ լեհ գրող Նիկոլայ Ռէյի խօսքով «Մարդուս կեանքում մի կաթիլ մեղր կայ և մի տակառ լեղի»: Մարդկանց մոլորեցնում են նրանք, որոնք պնդում են, թէ վեր բարձրանալիս մարդ անընդհատ վայելում է կեանքի նեկտարը. իմ կարծիքով, աւելի ճիշտ կը լինի ասել, որ մարդ դէպի բարձրը ձգտելիս իր դառն վշտերից նեկտար է քամում մարդկութեան համար: Դրանից չը պէտք է եզրակացնել, թէ չ'արժէ ձգտել դէպի բարձունքները, բայց անհրաժեշտ է նախապէս լաւ զննել դէպի վեր տա-

*) Ծանր է կեանքը:

նող ճանապարհները և ինկատի ունենալ, որ նրանք փշոտ են ու դժուարին:

Այդպէս ուրեմն, թող դէպի գիտութեան և ինքնուրոյն գործունէութեան բարձունքները դիմող կանայք աչքաթող չ'անեն երբէք այն, որ իրօք շատ վեր բարձրանալու համար նրանք պէտք ծանր գութանով ակօսեն բարոյականութեան անդաստանը: Թող նրանք երբէք չը մոռանան հետեւեալ ոտանաւորը մեր մեծ բանաստեղծի, որի երկերը ես կը ցանկանայի որ ամենքը կարդային, ըմբռնէին ու իբր ուղեցոյց ընտրէին, ոտանաւոր, որով նա դիմում է յարութեան ծարաւի մարդկային հոգուն.

«Եղիր մարդուս մէջ տանջանք երկնածին, եղիր գլուխ գործոց աննկուն կամքի: Եղիր համբերութիւն—տառապանքի իշխան, որ կամաց առ կամաց կանգնեցնում է իր շէնքը ոչնչից: Անդորրութիւն եղիր գոռ փոթորկի մէջ, չափ ու կանոն՝ խառնակութեան մէջ, ներդաշնակութիւն՝ աններդաշնակութեան մէջ, յաւիտենական գեղեցկութիւն եղիր կեանքի անվախճան պայքարում: Միմիայն ստորների ու կեղծաւորների համար եղիր սպառնալիք, զարոյթ կամ սուրբ լուծիւն, և դաշն մի կապիր երբէք կեղծիքի հետ: Հրեշտակի շունչ եղիր միւս բոլորի համար: Նեկտար եղիր, որ կենդանութիւն է տալիս սրտերին, քրոջ արտասուք եղիր նրանց համար թշուառութեան լուպէներին և առնական ձայն, երբ դողում է նրանց մէջ արիւնթիւնը: Տուն եղիր տնանկների համար և յոյս՝ յուսահատների համար: Իսկ մեռելի պէս քնածների համար եղիր զարթեցնող որոտ: Կեանքի չարաթոյն դժոխքի հետ կուեկիս այն ոյժը եղիր միշտ և ամեն տեղ, որ յաղթում է մահին սիրոյ հօգրագոյն ոյժով»:

(Ս. Կրասինսկիյ—Resurrecturis).

Չափից վեր բարձր իդէալ է այդ: Մեծ մարգարէները և մտածողները առհասարակ այնպիսի պահանջներ են յայտնում մարդկանց նկատմամբ, որոնց իրագործելը սովորական մարդկանց ոյժից վեր է, բայց որոնց վեհութիւնը յակամայից գրաւում է վսեմ սրտերը և կամքերը:

Պէտք է հասնել այդ բարձունքներին... Կարող է երբեմն դողալ ոտքդ, կամ կարող ես մոլորուել և ուրիշ շաւիղ ընտրել... դագաթնակէտը դեռ շատ հեռու կը լինի, երբ այլևս շունչ քաշել անհնար կը լինի: Ոչինչ: Պէտք է այնուամենայնիւ քայլես, բարձրանաս, մաքրես ուրիշների համար ճանապարհը քարերից, ջահովդ լուսաւորես նրանց ուղին: Ոմանք կը հասնեն նը-

պատակին, ոմանք կանգ կ'առնեն կիսաճանապարհին: Այնուամենայնիւ պէտք է ձգտել դէպի բարձունքը այն իդէալի, որ երգել է մարգարէն, իդէալական աշխարհի այդ արքայական արծիւը: Այլապէս մեր բոլոր կուտակած գանձերը, մեր ոյժերի ամբողջ պաշարը կ'եր կը դառնան մարդ-զազանի համար:

Թարգմ. Տ. Յ.